№ 198 Հոկտեմբերի 24 (Նոյեմբերի 5) 1881 Հոկտեմբերի 24 (Նոյեմբերի 5) № 198

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ստավրօպօլից. Ներքին լուրեր—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Порядокъ» լրագրի թղթակցութիւն. Արտաքին լուրեր—ԽԱՌԸՆ ԼՈՒՐԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղական ուսուցիչներ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Լրագիրները հաղորդում են, որ պրօֆէսօր Ռուդօլֆ Վիրխօվ հասել է արդէն Բերլին և ոգևորված կերպով ընդունվել է առաջադէմ և ազատամիտ կուսակցութեան կողմից, որոնք միացել են նրան ռայխստագի Բերլինի պատգամաւոր ընտրելու համար. Մի մեծ ժողովի մէջ Վիրխօվ բացատրել է մի երկար և գեղեցիկ ճառով թէ կարելի է անձնական կերպով թշնամի չը լինել իշխան Բիսմարկին, բայց թշնամի լինել նրա տնտեսական քաղաքականութեան.

Երևում է թէ գերմանական կառավարութեանը հաճելի չի լինի, եթէ պրօֆէսօր Վիրխօվ ընտրվի ռայխստագի պատգամաւոր, որովհետև կառավարչական կուսակցութիւնը գործ է դնում ամեն միջոցներ որպէս զի պրօֆէսօրը չընտրվի, այլ նրա տեղ ընտրվի յետադէմ կուսակցութեան մի մարդ.

Բայց Վիրխօվի պէս մի նշանաւոր մարդու կանդիդատութեանը ընդդիմադրելու համար հարկաւոր է, ի հարկէ, առաջարկել ընտրողներին մի այնպիսի կանդիդատ, որ նոյնպէս հեղինակութիւն ունենար և կարողանար մրցել աշխարհահռչակ մարդու հետ. Եւ ահա Բիսմարկ իշխանը ներկայացնում է իր կանդիդատին, դա յետադէմ կուսակցութեան և հակահրէական շարժման պարագլուխ, պալատական քարոզիչ Շտէօկկերն է.

Ուրեմն գերմանական յետադէմ կուսակցութիւնը այնքան երկիւղ է կրում Վիրխօվի ընտրութիւնից պարլամենտի մէջ, որ վճռում է ընդդիմադրել նրան իր ամենանշանաւոր մարդու անունը, տեսնելով որ Շտէօկկերի անունը միակ անունն է, որ կարող է քիչ թէ շատ մրցել Գերմանիայում ահագին ժողովրդականութիւն ունեցող Վիրխօվի անուան հետ.

,,Порядокъ" լրագիրը պատմում է թէ ինչ միջոցներ է գործ դնում գերմանական յետադէմ կուսակցութիւնը իր պատգամաւորներին ընտրել տալու համար: Ժողովներում ուտացնում, խմացնում են ընտրողներին և ճառախօսները անդադար գրգռում են բանւորների ամբոխի երևակայութիւնը կապիտալի, գումարատէրերի և մանաւանդ հրէաների դէմ. Յետադէմ կուսակցութեան ժողովները գրեթէ միշտ վերջանում են աղմուկով և ծեծով.

Ազատամիտ և առաջադէմ կուսակցութիւնները յոյս չունեն առաջիկայ պարլամենտում նստարանների մեծամասնութիւնն ունենալ. Նրանք յայտնում են որ գոհ կը լինեն եթէ ներկայ ընտրութիւններից այնքան յաղթող դուրս գան, որ կատարելապէս չը կորչեն, այլ պահպանվեն որպէս կուսակցութիւն.

Այս րոպէիս կարդացինք ,,Порядокъ" լրագրի մէջ մի հեռագիր, որ Բերլինի մէջ ընտրվել են չորս պատգամաւորներ, որոնք բոլորն էլ պատկանում են առաջադէմ կուսակցութեանը. Րիխտէր, Լիօվէ, Զաուկէն և Վիրխօվ.

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՍՏԱՎՐՕՊՕԼԻՑ

Հոկտեմբերի 17

Շատ ժամանակ չէ ինչ ես Ստավրօպօլումն եմ. դեռ այս քաղաքը չեկած ես սրան նկարում էի ինձ բաւականին բարեկարգած, բայց շատ սխալվեցի. Ամենևին չէ կարելի համեմատել այս քաղաքը Թիֆլիսի յետ. կասեմ մեծ գիւղ է, ոչ թէ քաղաք. Թէ ինչ է պատճառը Ստավրօպօլի յետ մնալու, այդ ամենքին պէտք է որ յայտնի լինի. երկաթուղին չանցաւ այս քաղաքով, և այդ բանի մէջ մեղադրում են քաղաքի վարչութեանը. Թէ սա իր ժամանակ չաշխատեց ինչպէս հարկաւոր էր. Զարմանալի բան է, միայն 60 վերստ է երկաթուղի ստանցիայից մինչև քաղաքը, ոչ երկաթուղի կայ և ոչ էլ փօստի լաւ շինած ճանապարհ. Այս կարելի է միայն ասել, որ քանի երկաթուղի չունենք, մեր Ստավրօպօլը յետ պիտի մնայ. Օրինակ կարելի է վերցնել Վլադիկավկասը, որը օրերով է բարեկարգվում և ոչ թէ տարիներով. Ինչ է պատճառը—Ռօստովի-Վլադիկավկասեան երկաթուղին և Թիֆլիսից մինչև Վլադիկավկաս հիանալի շինած շօսսէն. Ստավրօպօլում բաւականին հայ ժողովուրդ կայ, բոլորը համարեա թէ Նախիջևանցիք են, կան թէպէտ Ղզլարից և Թիֆլիսից. Դեռ լաւ ծանօթ չեմ այստեղի հայ հասարակութեան հետ, բայց ինչպէս լսեցի բաւականին յետ մնացած պիտի լինի. բոլորը համարեա թէ պարապում են վաճառականութեամբ, իսկ սեփականատէրերից ամենագլխաւորը՝ պ. Մակար Պօպօվն է, որին համարեա թէ կէս Ստավրօպօլն է պատկանում. ես այժմ չեմ զարմանում սրա արած կտակի վրա, պատճառ որ այդպիսի հազարներ շատ և շատ ունի և շատ էլ աշխատում է ունենալ.

Այս նամակով չեմ կամենում պ. Մ. Պօպօվի վրա խօսել, բայց դրա վրա խօսելու բան շատ կայ, այնպէս որ այդ կը յետաձգեմ միւս նամակի համար. Ժողովրդի մէջ շատ քիչ կան այնպիսի մարդիք, որոնք կամ հայոց լրագիրներ կարդային կամ ռուսաց, մինչև անգամ չեն հարց ու փորձ անում օրական հարցերի մասին. Հայերէն ամենքը համարեա խօսում են Նախիջևանի բարբառով. Նոյնպէս և ուրիշ քաղաքներից եկած հայերը. Նախիջևանցիք այնպէս շատ են, որ իրանց լեզուն սովորեցրել են ուրիշ հայերին էլ.

Զարմանալի բարբառ է սրանց բարբառը. Ես կարծեմ որ այսպիսի անպիտան բարբառ ոչ մի գաւառի մէջ չը պէտք է լինի. ոչ հայերէն է, ոչ ռուսերէն և ոչ թուրքերէն. Ծխական ուսումնարանում երեխայքը սովորում են հայերէն խօսելը, բայց ինչ պիտի անես երբ երեխան գնում է իր տուն և էլի լսում է իր ծնողներից

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

(Դիտողութիւններ)

I

Արձակուրդների սկզբում, մայիս ամսին ուղևորվեցայ N գաւառի Ս. գիւղը իմ մի մօտիկ բարեկամիս մօտ, որին առաջուց գրել էի նամակ. Ամսի եօթն էր, որ հասայ այդ հիանալի գիւղը. իսկ ութին ծանօթացայ ծխական ուսումնարանի ուսուցչի հետ. Նա կենում էր ուսումնարանական շինութեան մէջ, որ երկյարկանի քարաշէն հիանալի մեծ տուն էր, որի վրա, ինչպէս երևում էր, ճարտարապետը գործ էր դրել իր բոլոր հմտութիւնները. Առաջուց լրագրական տեղեկութիւններ ունենալով այդ ժողովրդի անտարբերութեան վրա դէպի ուսումնարանը՝ զարմացայ, տեսնելով այսպիսի մի հոյակապ շինութիւն, որի վրա երևի քանի մի հազարներ են ծախսվել խեղճ հասարակութենից, մտքումս էլ բարկացայ ինձ մոլորեցնող թղթակցի վրա, բայց վերջը իմացայ, որ շինողը ոչ թէ հասարակութիւնն է, այլ մի պատկառելի ծերունի, որ իր բոլոր կարողութիւնը ծախսել է այդ ուսումնարանի շինութեան վրա.

Ուսուցիչը, կամ ինչպէս գիւղում կանչում են՝ վարժապետը բռնած ունէր երկու սենեակ. մէկը որպէս ընդունարան, որ բաւական մաքուր էր, նոր ձևի կարասիքներով զարդարած, իսկ միւսը՝ կեղտոտ, որտեղ ամեն բան ածած էր խառն ու փնթիր. երևի այդ խոհանոցն էր, թէև վարժապետը այդ սենեակում ոչ եփում էր և ոչ խորովում, այլ ճաշում էր, ինչպէս մեծ մասը մեր գիւղական ուսուցիչներից՝ հիւրանոցում կամ քահանայի մօտ ամսական ութ րուբլիով. Ուսումնարանը աւելի եկամուտներ չունենալով ռոճիկ ստանում է տարեկան 300 րուբլի:

Ահա ինչ որ կարող էի ասել իմ նոր ծանօթ վարժապետի մասին.

Քանի մի օրից յետոյ, կարծեմ մեր ծանօթութեան չորրորդ օրը, ես կրկին այցելեցի նրան. Պատշգամի յատակի վրա նստած նա ինչ որ կարդում էր, ինչպէս երևում էր շատ ուրախ չէր իմ այցելութիւնից. Նա ամենևին ուշադրութիւն չը դարձրեց իմ գալու վրա. Մի փոքր լռութիւնից յետոյ փորձեցի գրաւել նրա ուշադրութիւնը, պատմելով Թիֆլիսի մեր ուսումնարանական կեանքից դիպուածներ, բայց շուտով դադարեցի, որովհետև ունկնդիրս ոչ թէ միայն չէր հետաքրքրվում իմ պատմածներով, այլ մինչև անգամ ես նշմարեցի, որ նա սաստիկ ձանձրանում, ուշտում է, թէև մի և նոյն ժամանակ ուզում էր ցոյց տալ իրան որ ինձ լսում է. Այս որ չը յաջողվեց, յետոյ փորձեցի մի քանի հարցեր առաջարկել ուսումնարանի, գիւղական ուսուցիչների և ուսուցչուհիների (սրանց թիւը գաւառներում այժմ քիչ է), գիւղացի մանուկների ընդունակութեան ու յառաջադիմութեան մասին, թեմական տեսչի և նրա գործունէութեան, հասարակութեան յարաբերութիւնը դէպի ուսումնարանը և այլն, բայց այս բոլոր հարկաւոր հարցերին նոր ծանօթս պատասխանում էր շատ կարճ լակօնական ձևով. «այո» և կամ «ոչ» բառերով. Օրինակ, երբ հարցնում էի, թէ պ. թեմական տեսուչը քննութիւնների համար այցելում է ուսումնարանին.—«Այո», պատասխանում էր նա. կամ այս հարցիս. պ. պ. հոգաբարձուները յաճախ են լինում, ուսումնարանի հաշիւը կանոնաւոր է պահվում, դուք գոհ էք ձեր դրութիւնից.—Ո՛չ, պատասխանում էր վարժապետը. Բարկութիւնս գալիս էր. ճշմարիտ, ուզում էի մինչև անգամ բարկանալ նոր ծանօթիս վրա, բայց մտածում էի, գուցէ մի օր լաւ տրամադրութեան մէջ գտնելով բացվի ու բոլորը պատմէ...

Այնուհետև ես շատ ուշ ուշ էի տեսնվում նրա հետ.

II

Անցաւ երկու շաբաթ, ինձ հարկաւորվեցաւ «Недѣля» շաբաթագրի 19 համարը. այս գիւղում անկարելի էր ճարել, ոչ քահանան և ոչ վարժապետը ոչ մի լրագիր չէին ստանում, ստիպված էի գնալ մօտիկ գիւղ, որը 10—15 վերստ հեռու է Ս. գիւղից. ինձ ասացին, որ այն գիւղի ուսուցիչը ստանում է շատ լրագիրներ թէ Թիֆլիսից և թէ Ս. Պետերբուրգից. Մայիսի քսան և մէկին կանուխ ձիով ուղևորվեցայ և ժամի 10-ին հասայ Դ. գիւղը. Ուղղակի բարձրացայ քահանայի տուն, մտայ սենեակը, մարդ չը կայ, նստեցի բազկաթոռի վրա (տան կարասիքից կարելի է ենթադրել, որ քահանան մի լուսաւորված մարդ է). Սպասեցի տաս, տասնհինգ րոպէ, ոչ ոք չերևեցաւ տան տէրերից. Պատի մեծ ժամացոյցը խփեց տասներկուսը. ես բեզարեցի նստելուց, վերկացայ և սկսեցի պատի երկարութեամբ քայլել. Այս էլ որ ձանձրացրեց, պատրաստվում էի դուրս գնալ ծանօթանալու գիւղի հետ. Օրը գեղեցիկ էր և տօնի պատճառաւ փողոցներում երևում էր մեծ բազմութիւն գիւղացիների, մանաւանդ եկեղեցու շուրջը. Պատրաստվում էի դուրս գալ սենեակից, յանկարծ ներս վազեց մի պառաւ կին. Նրա մաշված, կնճռոտ երեսի վրա դեռ նշմարվում էին չը ցամաքած արտասուքի կաթիլներ. խեղճ պառաւը շփոթվելով իմ ներկայութիւնից, ինչ որ ուզում էր ասել, բայց չը կարողացաւ, խօսքը բերանում կորվեց, իսկ դրա փոխանակ արտասուքը հեղեղի պէս թափվում էին նրա խոր ընկած աչքերից. Նայում եմ խեղճ պառաւի վրա զարմացած ու ես ինքս շփոթվում. Նա շատ էր աշխատում գոնէ մի բան ասել, բայց չէր կարողանում, արտասուքը խեղդում էր նրան. Թէև ինձ յայտնի չէր ինչ ցաւ կամ դժբաղդութիւն էր պատահել, որից այնպէս տանջվում էր յիսնամեայ պառաւը, բայց և այնպէս դժուար չէր ենթադրել, որ նրա գլխին եկել է մեծ դժբաղդութիւն.

Վերջապէս պառաւը խօսեց. «դուք, պարոն...», բայց չը կարողացաւ խօսքը շարունակել. Ես սկսեցի ի հարկէ նրան հանգստացնել.

—Ո՞ւր է տէր հայրը. հազիւ հեկեկալով հարցրեց պառաւը.—ահա, Գրիգորը մեռնում է,—շարունակեց նա չը սպասելով իմ պատասխանին.

—Գնանք, ի սէր Աստուծոյ գնանք... ասաց ու պինդ բռնեց իմ աջ ձեռքը, չոքեց առաջս և սաստիկ սեղմելով իր կրծքի վրա, շարունակեց.

—գնանք ի սէր Աստուծոյ, նա մեռնում է, բոլոր գիւղը լալիս է.

—Բայց ով է, ախար, այդ Գրիգորը, հարցրի ես բոլորովին շփոթված.

—Ա՛խ, ի սէր Աստուծոյ գնանք. Նա մեռնում է... խեղդված արտասուքից աղաչում էր պառաւը. նա մեր վարժապետն է... ողջ աշխարհը լալիս է». Պառաւը վեր կացաւ, կանգնեց. ես ծածկեցի գլխարկս ու դուրս գնացինք. Դուրսը բաւական շոգ էր. մենք գնում էինք շտապ շտապ, արեգակը անողորմ այրում էր մէջքս.

Անցնելով մի քանի կեղտոտ, հոտած փողոցներ, մենք բարձրացանք մի փոքրիկ բլրակի վրա. այստեղ էր շինած եկեղեցին, իսկ յետևից, կողքին՝ ուսումնարանը. Եկեղեցու գաւթում հաւաքվել էր մեծ բազմութիւն գիւղացի կանանց ու մարդկանց, աղջկանց ու տղաների. Բոլորի գունատ երեսների վրա արտայայտվում էր մի անորոշ տխրութիւն, ցաւ. Սրանցից ամեն մէկը աշխատում էր մի կերպով մօտենալ ուսումնարանին և մտնել այն սենեակը, ուր տանջվում էր հոգևարքը. Մեզ առանց խանգարելու ճանապարհ տուին. Լուռ ու մունջ անցնելով ուսումնարանի շուրջ հաւաքված բազմութեան միջով, ես շտապով ներս մտայ սենեակը. այստեղ ես լիքն էր գիւղացիներով, որոնք «սաս ու սորտխը» կտրած, տխուր, արտասուքը աչքերին նայում էին միմեանց.